

Համարը N 316
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ԼՂՀՊՏ 2006.07.12/17(26)
Ընդունող մարմինը ԼՂՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ԼՂՀ Վարչապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 24.07.2006

Տեսակը Մայր
Կարգավիճակը Գործու
Ընդունման վայրը Ստեփա
Ընդունման ամսաթիվը 27.06.20
Ստորագրման ամսաթիվը 27.06.20
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՍՏՈՒԳՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԵՎ ԱՌԳՐԱՎՎԱԾ ԱՊՕՐԻՆԻ ԶԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ (ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՈՐՍԻ) ՏՆՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳԸ ԶԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27» հունիսի 2006թ.

N 316

ք.Ստեփանակերտ

ՍՏՈՒԳՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԵՎ ԱՌԳՐԱՎՎԱԾ ԱՊՕՐԻՆԻ ԶԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ (ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՈՐՍԻ) ՏՆՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳԸ ԶԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բնապահպանական վերահսկողության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ղ ո շ ու մ է.**

1. Հաստատել **ստուգման** ժամանակ հայտնաբերված և առգրավված ապօրինի ձեռք բերված բնական ռեսուրսների (ներառյալ՝ որսի) տնօրինման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՂԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կառավարության
2006թ. 27-ին հունիսի
թիվ 316 որոշման

Կ Ա Ր Գ

ՍՏՈՒԳՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԵՎ ԱՌԳՐԱՎՎԱԾ ԱՊՕՐԻՆԻ ԶԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ (ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՈՐՍԻ) ՏՆՕՐԻՆՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով ստուգումների ժամանակ հայտնաբերված և առգրավված՝ ապօրինի ձեռք բերված բնական ռեսուրսների՝

ա) կենսառեսուրսների՝ վայրի խոտաբույսերի, թփերի, ծառերի, այդ թվում՝ փայտանյութի և վայրի կենդանիների ու դրանց արգասիքների,

բ) հողի բերրի շերտի,

գ) օգտակար հանածոների տնօրինման կարգը:

2. Սույն կարգի 1-ին կետի «ա» ենթակետում նշված արագ փչացող՝ առգրավված կենսառեսուրսներն անհատույց հանձնվում են տվյալ շրջանի կամ համայնքի (կամ հարակից շրջանի կամ համայնքի) մանկատներին կամ ծերանոցներին, թանգարաններին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության բնապահպանական պետական տեսչության տարածքային ստորաբաժանման ղեկավարի և ընդունող կազմակերպության ղեկավարի կողմից կազմված

հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ անասնաբուժասանիտարական փորձաքննության մասին եզրակացությունից հետո:

Արագ փչացող կենսառեսուրսներ են համարվում որսված՝ անկենդան վայրի կենդանիները (գազաններ, թռչուններ, ձկներ, խեցգետիններ և ջրային ու ցամաքային այլ կենդանիներ), որոնք ենթակա են օգտագործման միայն անասնաբուժասանիտարական փորձաքննության ենթարկումից հետո:

3. Սույն կարգի 1-ին կետի «ա» ենթակետում նշված՝ առգրավված կենդանի վայրի կենդանիները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության բնապահպանական պետական տեսչության տարածքային ստորաբաժանման տեսուչների կողմից ազատ են արձակվում բնական միջավայր՝ տվյալ շրջվարչակազմի գյուղատնտեսական բաժնի և անտառտնտեսության աշխատողների մասնակցությամբ:

Կենդանիները, ներառյալ Կարմիր գրքում գրանցված կենդանիները, ազատ են արձակվում իրենց բնակության միջավայր (ապրելավայր, արեալ):

Կենդանիների՝ բնական միջավայր ազատ արձակման փաստն արձանագրվում է, իսկ ազատ արձակման պահը՝ տեսագրվում:

4. Սույն կարգի 1-ին կետի «ա» ենթակետով սահմանված թփերն ու խոտաբույսերը, բացառությամբ դեղաբույսերի, ոչնչացվում են:

Ոչնչացման ենթակա թփերն ու խոտաբույսերը ոչնչացվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության բնապահպանական պետական տեսչության համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի կողմից ստեղծված՝ 3 մարդուց բաղկացած հանձնաժողովի կողմից, որում ընդգրկված է նաև համապատասխան անտառտնտեսության ներկայացուցիչը: Ոչնչացման փաստն արձանագրվում է, իսկ ոչնչացման պահը՝ տեսագրվում:

Առգրավված դեղաբույսերը հանձնվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարությանն՝ ի տնօրինում:

5. Դատական կարգով բռնագրավված՝ սույն կարգի 1-ին կետի «ա» ենթակետում նշված ծառերը, ներառյալ փայտանյութը և սույն կարգի 1-ին կետի «գ» ենթակետում նշված օգտակար հանածոները, ենթակա են իրացման՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից՝ օրենքով սահմանված կարգով: Իրացումից ստացված գումարը եռօրյա ժամկետում մուտքագրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե:

Մինչև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից՝ աճուրդային կարգով կենսառեսուրսների իրացումը՝ առգրավված ծառերը, ներառյալ փայտանյութը և օգտակար հանածոները, տեղադրվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության բնապահպանական պետական տեսչության համապատասխան տարածքային ստորաբաժանում կամ դրան փոխարինող շինությունում կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության բնապահպանական պետական տեսչության համապատասխան տարածքային ստորաբաժանման կողմից, համապատասխան արձանագրությամբ, ի պահ են հանձնվում դրանց պահպանման համար անհրաժեշտ պայմաններ ունեցող մուտակա կազմակերպության (բնության հատուկ պահպանվող տարածքի, անտառտնտեսության, դենդրոպարկի և այլն) տնօրինությանը:

6. Սույն կարգի 1-ին կետի «բ» ենթակետում նշված՝ առգրավված հողի բերրի շերտը շրջանի տարածքների հողերի բարելավման, կանաչապատման և վերականգնման նպատակով անհատույց հանձնվում է առգրավման վայրի համապատասխան տարածքային կառավարման մարմին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության բնապահպանական պետական տեսչության տարածքային ստորաբաժանման ղեկավարի և շրջվարչակազմի ղեկավարի կողմից լիազորված պաշտոնատար անձի միջև կազմված հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

7. Սույն կարգում նշված արձանագրությունները գրանցվում են գործերի վարույթի գրանցամատյանում, իսկ տեսագրությունները՝ պահվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության բնապահպանական պետական տեսչությունում: